ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխարհագրություն

(առարկա)

ԹԵՄԱ՝ - Համագործակցային մեթոդի կիրառումը աշխարհագրության դասերին

Կազմեց՝ Անյուտա Միխայելի Օհանջանյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

Կապանի N5 հիմնական դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Գայանե Հայրապետյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Բովանդակություն 2
Ներածություն 3
Համագործակցային ուսուցում 6
Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ 10
Համագործակցային դասի պլանավորում 13
Հավելված 15
Եզրակացություն 25
Օգտագործված գրականության ցանկ 26

Ներածություն

Հետազոտական արդիականությունը- Այսօր հասարակության փոփոխմանը համընթաց փոխվում են նաև կրթական պահանջները, ուսուցման նպատակներն, մեթոդները և ձևերը: Դրան համապատասխան փոխվում է մանկավարժի դերը: Ուսուցչի առջև խնդիր է դրվում ոչ թե նպաստել սովորողների առարկայական գիտելիքների ձեռք բերմանը,այլ նրա ջանքերը ուղղել աշակերտի անհատականության զարգացմանը, որպեզի նա իր ստեղծագործական և այլ կարողությունների շնորհիվ ճկուն լինի հասարակական փոփոխությունների նկատմամբ:

Համագործակցային **ուսուցումը** այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր **մշակույթ**:

Ուսուցման իմաստն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ: Անհատին դարձնել ակտիվ և կարողանա լինել խմբի անդամ և համագործակցել:

Համագործակցային ուսուցման եղանակը սովորողին ավելի մեծ հնարավորություն է տալիս իր գիտելիքները ամրապնդելու, սեփական կարծիքը ձևավորելու, ինքնուրույն սովորելու, աշխատելու իր հասակակիցներին սովորեցնելու ընթացքում, ուսուցչի հսկողության ներքո:

Հետազոտության նպատակը- Դպրոցականների մոտ ձևավորել փոխադարձ համագործակցություն և փոխօգնություն:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով՝ համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի ապահովումը,

միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները: Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները:

Ուսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Ուսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից:

Լ. Վիգոտսկին գրել է «Մեթոդը միաժամանակ նախադրյալ է, և նյութը, գործիք և ուսումնասիրության արդյունք»:

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝ դասի տիպից ու կառուցվածքից,

- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

Ցանկացած դաս-ուսուցում և մեթոդների կիրառում տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները, կարողությունները: Այս տեսակետից հետաքրքիր է Բենջամին

Բլումի առաջարկած ուսուցման դասակարգումը: Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ: Նոր գիտելիքները դարձնում է կիրառական, գնում դեպի գիտելիքների խորացում ու վերլուծություն: Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռք բերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Համագործակցային ուսուցում

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ:

Համագործակցային կամ ***խմբային*** ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում և այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն:

Գոյություն ունի համագործակցային ուսուցման հինգ բաղադրիչ, որոնք գործիք են դառնում այս մեթոդի առաջադրանքները լուծելու համար.

1. **Դրական հարաբերություններ**- յուրաքանչյուր աշակերտի հաջողությունը կախված է մյուս աշակերտների ազնվությունից: Աշակերտները սովորում են փոխադարձ պատասխանատվություն և թիմային աշխատանք:
2. **Անհատական պատասխանատվություն**- յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է խմբի աշխատանքներին և պատասխանատու է խմբային գործունեության արդյունքի համար:
3. **Հաղորդակցման հմտություններ**- յուրաքանչյուր աշակերտի համար կարևոր է զարգացնել ուրիշներին լսելու, օգնելու, պարզելու, ստուգելու հասկանալու, հարց տալու կարողություն: Այս հմտությունները օգնում են լուծել հակամարտությունները, հակասությունները և լուծել խնդիրներ:
4. **Ուղղակի աջակցություն**- աշակերտները ուղղակիորեն աջակցում են միմյանց: Նրանք փոխանակում են կարծիքներ, գնահատում են միմյանց աշխատանքներ: Միմյանց բացատրում են նոր նյութեր և օգնում լրացնել գիտելիքների բացերը:
5. **Ինքնագնահատականը**- աշակերտները սովորում են գնահատել իրենց ներդրումը խմբային աշխատանքի հաջողության գործում:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ:

ա/ Աշակերտների թիմային առաջադիմություն,

բ/ Խճանկար

գ/ Շրջվիր դեպի զույգդ

դ/ Պրիզմա

ե/ Խմբային հետազոտություն

զ/ Շրջագայություն պատկերասրահում և այլն :

Դիտարկենք մեթոդներից մի քանիսը՝.

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկարի» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը **փոքր խմբային աշխատանքն** է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում : Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ

գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները

զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն

- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր
- հաջողությունն ապահովելու հարցում, խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները, ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորությունը

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթաց ի մշակմամբ համագործակցողներ և

գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելո ւ հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար՝խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ՝միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները

ա/ Պատրաստել ուսումնական նյութեր և մշակել ուսումնական մոտեցումներ

բ/ Ստեղծել և կազմակերպել խմբեր

գ / Աշակերտներին ծանոթացնել խմբում աշխատելու եղանակներին

դ/ Բացատրել խմբում վարքի կանոնները /հարգանք, հանդուրժողականություն, լսելու ունակություն

ե/ Տալ հրահանգներ,համոզվել որ խմբի բոլոր անդամները կատարում են իրենց պարտականությունները

զ/ Լսել քննարկումները, անհրաժեշտության դեպքում հարցը բարձրաձայնել

է/ Օգնել հասկանալ ուսումնական նյութը

ը/ Օգնել աշակերտներին աշխատանքի ինքնագնահատման հարցում, պարզել, արդյոք նրանք հասել են նպատակին, առաջարկել թե ինչպես բարելավել իրենց աշխատանքի արդյունքները

թ/ Գնահատել խմբի աշխատանքի արդյունքները և յուրաքանչյուրի ներդրումը հանձնարարականի իրականցման գործում

Խմբային դասերը միշտ ունեն երկու նպատակ.

- Նախ պետք է որոշել գիտելիքի ակադեմիակն մակարդակը և կրթական նպատակը
- Որոշել որոշակի կարողությունների և մտածողության զարգացման անհրաժեշտության հարարաբերությունները

Երկրորդ նպատակը՝ կրթական հաղորդակցությունն է:

Խմբում սովորողների թիվը ազդու°մ է նպատակին հասնելու վրա:

Այս հարցերը որոշելիս հաշվի առնել հետևյալը.

- ✓ սկսել զույգերով կամ եռակիից, որում բոլորը պետք է աշխատեն

- ✓ որքան մեծ է խումբը, այնքան մեծ են պահանջները խմբի անդամների հարաբերությունների համար

Խմբի կազմը.

- ✓ Նպատակին հասնելու համար կարևոր է ճիշտ կազմակերպել խմբերը
- ✓ Տարբերակված խմբերը հիմնականում լավագույնն են :Ցանկալի է մեկ խմբում ներառնել ինչպես թույլ, այնպես էլ ուժեղ աշակերտների:

Համագործակցային ուսուցման մեթոդի առավելությունները

Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

Համագործակցային ուսումնառության առավելություններն են՝

- ձեռքբերումների/նվաճումների մակարդակի բարձրացում,
- փոխկախվածություն՝ դրական իմաստով
- խմբի անդամների կողմից հանձնարարության շուրջ աշխատելու ուշագրավ կամ նոր մոտեցումների մշակում և զարգացում
- դեմ առ դեմ (ակտիվ) հաղորդակցություն,

_փոխհարաբերությունների համար դրական միջավայրի ձևավորում (ցույց է տալիս, թե որքան արդյունավետ է թիմը գործում, և օգնում է հասկանալու՝ ինչպես անել, որ ավելի լավ ստացվի),

- ոգևորություն, էներգիա, հուզականություն,
- անհատական պատասխանատվություն (մեզնից յուրաքանչյուրը պետք է իր ներդրումն ունենա և սովորի),
- միջանձնային և փոքր խմբային հմտությունների ձևավորում (հաղորդակցություն, վստահություն, առաջնորդություն, որոշումների կայացում և կոնֆլիկտների լուծում):

Համագործակցային ուսուցման մեթոդի թերությունները

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 25-35: Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն:

Համագործակցային դասի պլանավորումը

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, բուն դասը և վերլուծական աշխատանք, որը պետք է կատարել դասից հետո: Դասից առաջ Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը պատկերացնելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է. ու՞ր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով:

`Նախապատրաստության կարևոր մաս է կազմում դասասենյակի համապատասխանեցումը տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին: Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը, համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի, որ օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են: Հնարավոր է, որ կարիք լինի փոփոխելու մեթոդների հաջորդականությունը՝իրադրությանը հարմարվելու նպատակով: Այս ամենի մասին նախօրոք հոգալը ուսուցչին լրացուցիչ վստահություն կներշնչի, կօգնի դասի հարթ ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը:

Դասից առաջ ուսուցիչը, որոշակի հարցերի շուրջ նախապես մտածելով, կարող է ավելի հստակ գնահատել դասին իր պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը: Այդ հարցերն են՝ Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասելիքները իրատեսական:

- Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ աշակերտները պատրաստ են վարժության
- Քննարկմանը, մեթոդի կիրառմանը: Ինչպե՞ս պետք է կառուցեմ առաջադրանքը:
- Որքանո՞վ են իմ ակնկալիքները իրատեսական ժամանակի առումով:
- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների հմտությունների ձեռքբերումը:
- Ի՞նչ եմ ուզում, որ աշակերտները զգան (ինչպիսի՞վերաբերմունք եմ ուզում)

Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք ուղղված են սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի

մեր խնդիրն է աշխարհագրության դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

Փորձենք կոնկրետ դասերի օրինակներով անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային միջոցների կիրառման արդյունավետությանը և որքանո՞վ է առաջադրված փորձը նպաստելու նշյալ հմտությունների զարգացմանը:

Ընտրել եմ 7-րդ և 9-րդ դասարանները.

9-րդ դասարանի թեման՝ Հայկական լեռնաշխարհը / ամփոփիչ դաս/:

-Հայենիքի աշխարհագրության իմացությունը նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի,հայրենի երկրի պատմության ու մշակույթի իմացությունը: Միայն ճանաչելով դուք կգնահատեք Հայաստանը մեր միակ հայենիքը, հականալով կսիրեք այն,կզգաք ձեզ նրա իսկական տերը և կնվիրվեք նրա բարգավաճման վեհ նպատակին: Այս նախաբանով սկսեցինք դասը:

Հավելված

Դասի պլան

Ամսաթիվ – 7.10.2022թ

Դասարան- 9ա, 9բ

Թեմա- **Ամփոփիչ դաս- Հայկական լեռնաշխարհ**

Անհրաժեշտ նյութերը- պաստառներ խմբային աշխատանքի համար, մարկեր, քարտեզ

Կիրառվող մեթոդները – համագործակցային խմբային աշխատանք, հարց ու պատասխան

Նպատակը՝ 1. Ճանաչել Հայկական լեռնաշխարհը

2. Ընդլայնել, ամրապնդել և խորացնել գիտելիքները թեմայի վերաբերյալ

Արժեքային համակարգ-ա/Ճանաչի իր հայենիքը, լինի հարենասեր

բ/ Ժամանակակից աշխարհում, մեզ հարող տարածաշրջանում գիտակցի հայոց պետականության դերն ու նշանակությունը

գ/ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն

Միջառարկայական կապերը-

Պատմություն-կարողանա ներկայացնել Հայկական լեռնաշխարհի հետազոտման պատմությունից, ներկայացնեն պատմական նշանավոր իրադարձություններ

Գրականություն- Հայաստանի վերաբերյալ նշանավոր մարդկանց ասույթները / Ստրաբոն, Հերոդոտոս, Ջ.Գ. Բայրոնը և այլն/

Մաթեմատիկա- կարողանան հաշվարկներով կատարել բնագիտություն, ֆիզիկական աշխարհագրություն և այլն:

Ակնկալվող վերջնարդյունքը –

1.Ներկայացնել Հայկական լեռնաշխարհի դիրքի, բնական պայմանների և կլիմայի առանձնահատկությունները, թվարկի մակերևույթի, ջրագրակն ցանցի գլխավոր օբյեկտները, իմանա վերընթաց գոտիները,օգտակար հանածոները :

2. Կարողանան քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի բոլոր աշխարհագրական միավորները/ լեռները, գետերը, լճերը և միջլեռնային գոգացվորությունները/:

Կազմակերպչական մաս- / 5 րոպե/

1. Նախորոք կահավորել դասասենյակը խմբային աշխատանքի համար

2. Կազմել ըստ գույների 5 խումբ

3. Խմբերը ընտրում են առաջադրանքները և սեղանի համարը

Խթանում – /2-3 րոպե / հարց ու պատասխանի միջոցով հիշել գլխավոր հասկացությունները

Իմաստի ընկալում- /15 րոպե/ Խմբային աշխատանք

դասարանը բաժանվում է 5 խմբի ընտրվում են հանձնարարությունները

1-ին խումբ - Հայկական լեռնաշխարհի մակերևույթի ձևերը/ ծալքաբեկորային, հրաբխային և միջլեռնային գոգավորությունները/

2-րդ խումբ- Կլիմայի առանձնահատկությունները

3-րդ խումբ –Հայկական լեռնաշխարհաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները /սահմանները, մակրոդիրքը, մեզոդիրքը/

4-րդ խումբ- Վերընթաց գոտիականություն/ հողի տիպ, բուսական և կենդանական աշխարհը/

5-րդ խումբ- Հայկական լեռնաշխարհի գետերը և լճերը:

Կշռադատման փուլ – /15րոպե/ Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, մյուսները լսում են և նախապես կազմված ռուբրիկի միջոցով կատարում գնահատում, գնահատում կատարվում է նաև խմբի ներսում:

Վերջում ուսուցիչը անդրադարձ է կատարում նկատված թերություններին և կատարում համապատասխան մեկնաբանություններ:

Վերջնական գնահատումը իրականացվում է խմբային և անհատական գնահատումների վերլուծության հիման վրա;

Տնային աշխատանք- Պատրաստվել թեմատիկ գրավոր աշխատանքի:

Արդյունքները փորձենք ներկայացնել դիագրամներով.

ա/ խմբերի արդյունքները

բ/ անհատական արդյունքները

Խմբային աշխատանքներում ամենաբարձր միավորը 12-ն է, ամենացածրը՝ 4-ը:

9-րդ ա դասարան խմբերի հավաքած միավորները



9-րդ բ դասարան խմբերի հավաքած միավորները



Անհատական ցուցանիշները 9-րդ ա

Կապույտ գույնը բարձր առաջադիմությունն է 8-10

Կարմիր գույնե միջին առաջադիմությունը 6-7

Կանաչ գույնը ցածր առաջադիմությունը 4-5



Անհատական ցուցանիշները 9-րդ բ



Նկարներ դասերից 9-րդ ա դասարան





Նկարներ դասերից 9-րդ բ դասարան



7-րդ ա, 7-րդ բ դասարաններում նոր դասի հաղորդման ժամանակ օգտվեցի «Շրջագայություն պատկերասրահում» համագործակցային մեթոդից: Այս մեթոդը հնարավորություն է տալիս շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին:

Խմբերը պետք է նախ ուսումնասիրեն հանձնարարված հատվածը, քննարկեն, մտքեր փոխանակեն: Կգնահատվեն ըստ իրենց նախընտրած ներկայացման ձևի(բացատրություն, գծապատկեր, սխեմա, աղյուսակ և այլն): Տրվում է աշխատանքի կատարման ժամանակ: Պատրաստի առաջադրանքը փակցվում է գրատախտակին կամ պատերին `ստեղծելով պատկերասրահ: Խմբի աշխատանքը կներկայացնի իմ կողմից ընտրված աշակերտը(սա հնարավորություն է տալիս խմբի բոլոր աշակերտներին պատրաստ լինել):

Մեթոդը արդյունավետ էր դասարանի մեծ մասը կարողացան ոչ միայն ծանոթանալ այլ արագ յուրացնել նոր նյութը: Արդյունքում դասարանի յուրաքանրյու անդամ մասնակցում էր դասապրոցեսին, համագործակցում և որ կարևորն է իրար բացատրում և սովորեցնում: Գնահատվեցին խմբի անդամների աշխատանքը, ըստ ներկայացված պահանջների:

Անուն, ազգանուն	Անբավարար	Բավարար	Միջին	Լավ	Շատ լավ	Գերազ.
Դասին մասնակցել եմ						
Դասը հասկացել եմ						
Ընկերներիս բացատրել եմ						
Հարցերին պատասխանել եմ						
Մասնակցել եմ քննարկմանը						

Կարելի էր նաև նյութի յուրացվածությունը ստուգել թեստի օգնությամբ:

Դասի պլան Դասարան -7-րդ

Թեման – Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն

Հիմնական հասկացությունները- Վառելիքաէներգետիկ հաշվեկշիռ, պայմանական վառելիք, էլեկտրաէնեգետիկայի ճյուղերը /ՋԷԿ, ՋրԷԿ, ԱԷԿ/

Միջառարկայական կապերը- Հայոց լեզու կարողանան գրագետ հայերենով արտահայվել առանձնացնել հասկացությունները , գաղափարները
Պատմություն՝ կարողանա ներկայացնել էլեկտրաէներգիայի զարգացման փուլերը, առանձնահատկությունները
Մաթեմատիկա՝ կատարել հաշվարկներ

Արժեքային համակարգը- 1.Գիտակցի երկրագնդի բնական ռեսուրսների և պայմանների սահմանափակությունները
2. Մերժի բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքը:

Նպատակը- 1. էլեկտրաէներգետիկայի տեղն ու դերը համաշխարհային արդյունաբերության մեջ
2.էլեկտրաէներգետիկայի ճյուղային կառուցվածքը /ավանդական և ոչ ավանդական/
3.էլեկտրաէներգետիկայի տեղաբաշխման օրինաչափություններն ու առանձնահատկությունները
4. Խմբային աշխատանքի միջոցով ապահովել և ամրապնդել ճյուղային կառուցվածքի գիտելիքները

Ակնկալվող վերջնարդյունքը-1.Գիտակցի էլեկտրաէներգետիկայի դերն արդյունաբերության զարգացման մեջ
2.Կարողանա վերլուծել արդի փուլում էլեկտրաէներգետիկայի զարգացման առանձնահատկությունների ազդեցությունը հասարակական կյանքի վրա
3. Գնահատի էլեկտրաէներգետիկայի զարգացման և տեղաբաշխման առանձնահատկությունները բնապահպանության տեսակետից:
4. Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ վառելիքային օգտակար հանածոները
5. Իմանա աշխարհի առավել մեծ հզորություն ունեցող ջէկ,ջրէկ, ատկ-ները և նշի երկրները:

Անհրաժեշտ նյութեր- Դասագիրք, աշխատանքային տետրեր, ատլասներ, A4 թուղթ

Կիրառվող մեթոդները- Մտագրոհ, T-աձև աղյուսակ, «Շրջագայություն պատկերասրահում»

Դասի տևողությունը- 45 րոպե

Խթանման փուլ - 5 րոպե մտագրոհ, որի միջոցով վեր հանել աշակերտների ունեցած գիտելիքները էլեկտրաէներգետիկայի ճյուղերից, կարծիքներ զարգացման փուլերից:

Իմաստի ընկալման փուլ -25 րոպե խմբային աշխատանք

Դասարանը բաժանել 5 խմբի, յուրաքանչյուր խմբին տալ մեկ հանձնարարություն /դասի հատված/

1-խումբ- էլեկտրաէներգետիկայի ճյուղային կառուցվածքը /ավանդական, ոչ ավանդական/

2-խումբ- էլեկտրաէներգետիկայի ճյուղերի անհավասարաչափ տեղաբաշխումը

3-խումբ-էլեկտրաէներգետիկայի ճյուղերի առավելություններն ու թերությունները

4-խումբ-Վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման փուլերը

5-խումբ- Վառելիքաէներգետիկ ռեսուրսների տեղաբաշխումը

Խմբերը իրենց աշխատանքները ներկայացնում են գծապատկերների, աղյուսակների միջոցով:

Կշռադատում- 10 րոպե Կատարել ամփոփում քառաբաժան մեթոդի օգնությամբ:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ի՞նչպես կարող եմ օգտագործել	Ի՞նչ եզրակացություններ արեցի….

Տնային աշխատանք- Դաս 18 էջ 82-92 ուրվագծային քարտեզի վրա նշել գազի, նավթի, ածխի արդյունահանման և սպառման հիմնական շրջանները

Եզրակացություն

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնալու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն:

Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Իհարկե չի կարելի պնդել, որ համագործակցային ուսուցումը համադարման է բոլոր կրթական խնդիրների համար: Կարող է լինել, որ աշակերտները չցանկանան համագործակցել:

Համոզված եմ, որ համագործակցային ուսուցման մեթոդները ներկայացնում են կազմակերպման նոր ձևաչափ ուսումնական գործընթացում և արդյունավետ են հաղորդակցման համար:

Մենք հեշտությամբ կարող եք հնարքներ օգտագործել համագործակցային ուսուցման դասի տարբեր փուլերում՝ առանց շատ ժամանակ ծախսելու, իսկ դասերն կդառնան ավելի հետաքրքիր և դինամիկ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհանիսյան Ա. , Հարությունյան Կ. , Խրիմյան Ս. , Խաչատրյան Ս. , Բայաթյան Ն. , Ալեքսանյան Լ. , Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006 122 էջ:
2. Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց Երևան: «Անտարես»: 2006, 95 էջ:
3. Ռ.Մարգարյան, Մ. Մանասյան, Գ.Հովհաննիսյան, Ա.Հովսեփյան «Աշխարհագրություն» 7-րդ դասարան /2013թ/
4. Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան «Հայաստանի Աշխարհագրություն» 9-րդ դասարան /2014թ/
5. Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon